№ 212 Նոյեմբերի 16 Երեքշաբթի 1882 Նոյեմբերի 16 Երեքշաբթի № 212

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարինը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Աղդաշից։ Նամակ Երևանից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Պրոֆ. Պատկանեանի դասախօսութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՂԴԱՇԻՑ

—

Հոկտեմբերի 28

Այստեղ առևտուրն աննախանձելի դրութեան մէջ է, համեմատելով նախորդ տարիների հետ։ Գլխաւոր և արդիւնաւէտ բերքը չերամն է, որը այս տարի էլ, մի քանի բաղդախնդիր չարչի վաճառականների չնորհիւ, չաջողվեցաւ, այն ինչ եթէ մասնագէտ անձանց թողնվէր արդիւնահանութեան այդ ճիւղի բարւոքելը, գուցէ մեծ յաջողութեամբ առաջ դնար զիւղատնտեսութեան այդ բեղմնաւոր մասը, ոչ միայն Աղդաշի գաւառում, այլ և շրջակայ բոլոր գաւառներում, որտեղ աւանդական սովորութեամբ առանձնապէս մեծ ակնկալութեամբ պարապում են այդ զործով։

Չերամապահութեան արդիւնաբերութեան այս մի քանի տարվայ ընթացքում չաջողվելու զլխաւոր պատճառն այն է, ասում եմ, որ ագահ վաճառականները, նոյն իսկ ամենայեսին չարչիները, որոնք ոչ մի մասնագիտական տեղեկութիւն չունեն չերամի կեանքի և յատկութեանց մասին, առանց ճանաչելու հիւանդն ու առողջը, առանց քննելու սերմացու թիթեռի դրութիւնը և միայն մի քանի ռուբլի վաստակելու նպատակով, փոքր ինչ ձեռնտու գնով իրանց առած կամ հանած սերմը վաճառում են զիւղական տգէտ ժողովրդի վրա, հաւատացնելով որ ամենաընտիր տեսակիցն է։ Իսկ հասարակ և տգէտ ժողովուրդը աւելի հեշտութեամբ է առնում արժան գնով ծախվող սերմերը, չը մտածելով, որ նրանք կարող են հիւանդոտ և անպէտք լինել. պահում է այդ սերմերը, որոնց մի մասից իր ժամանակին որդներ չեն դուրս գալիս, իսկ միւս մասն էլ, որից որդն է դուրս գալիս, ստիպում է զիւղացուն երկար ու տաժանակիր աշխատութեամբ կերակրել այդ որդները, մինչև որ դեռ բոժոժ չը հիւսած, կոտորվում, փչանում են և աշխատաւորին զբրկում նոյն իսկ իր առօրեայ հացը հայթայթելու միջոցներից և ժամանակից օգուտ քաղելուց։

Իմ կողմից խորհուրդ կը տայի, գոնէ Ելիսաւէտպօլի նահանգում չերամապահութեամբ պարապող զիւղական հասարակութեանցը առողջապահական և մասնագիտական բոլոր միջոցներով պահած ընտիր սերմեր (իտալական տեսակը) զբնելու (և եթէ կամենան պայմանաւոր եղանակով վերցնելու) համար, դիմել Նուխում ֆրանսիացի մասնագէտ պ. Օգիւստ Լերիսէին, որը՝ մեր երկրի չերամապահութեան արդիւնաբերութիւնը վերականգնելու նպատակով, երկար տարիների ընթացքում ապրելով Կովկասում, իր մասնագիտական բաղմաթիւ պարապմունքների և փորձառութիւնների հետ ի միասին ծախսել է և մեծամեծ գումարներ, Եւրօպայից մեծաքանակ և զանազան կլիմաների տակ պահվող սերմեր բերել տալով, և այդ սերմերի, նրանց թիթեռների և թիթեռների կեանքը խոշորացուցային ճիշտ զննողութեանց ենթարկելուց յետոյ, այսօր, ահա, հասել է այն բարեբախտ հետևանքին, որ պարոնի սերմերի նման ընտիր սերմեր ամբողջ Կովկասի ոչ մի տեղում չը կայ։

Մասնագէտի գործը՝ մասնագէտը միայն կարող է գնահատել. իսկ ես մասնագէտ չեմ չերամապահութեան մէջ, այդ պատճառով էլ ինձ մնում է վերև սասածներիս համար միմիայն կենդանի փաստեր առաջ բերել։ Պարոն Լերիսէն իր հանած ընտիր սերմերը առհասարակ չէ վաճառում, որովհետև արժողութեան չափ փող չեն վճարում, այլ բաժանում է ցանկացողներին այն պայմանով, որ այդ սերմերից զոյացած թաց բոժոժի $^1/_3$-ական մասը իրան տան և, եթէ կը ցանկանան պահողները, իրանց հասած $^2/_3$-ական մասն էլ փողով, մաղանդայից 2 ռուբլի աւելով իրան վճառեն։ Ահա այդ պայմանով վեր առած սերմերի մի համառօտ հաշիւ, որին այս տարի անձամբ ականատես և վերահասու եղայ Նուխում. 1) Դալլաք Սարգիսը վերցրել է 2 մսխալ սերմը—ստացել է 25 ֆունտ ամենաաղնիւ տեսակի բոժոժ. 2) պրիստաւ Հասան-բէգը 6 մսխ. և ստացել է 1 պուդ բոժոժ. 3) Մուստաֆա-աղա Շէքիխանովը 5 մսխ. ստացել է 1 պուդ և 7 ֆունտ. 4) Շէրբաչեվը—3 մսխ. և ստացել է 26 ֆունտ. 5) ուրիադնիկ Իսրաֆիլը 12 մսխ. և ստացել է 3 պուդ և 18 ֆունտ բոժոժ. և այլն և այլն, որոնց մի առ մի հաշուելը երկար կը լինէր։

Վերև յիշված թուերից երևում է, որ ամեն մի մսխալ սերմից ստացվում է մօտաւորապէս 10 ֆունտ բոժոժ, հետևապէս և մէկ ֆունտ սերմից ստացվում է 24 պուդ մաքուր և ընտիր բոժոժ։ Այս հաշիւը ցոյց է տալիս, որ պ. Լերիսէի սերմերը իսկապէս հասցրած են իրանց ամենակատարելագործված վիճակին, և եթէ այս այսպէս շարունակվի, անուրանալի մի ճշմարտութիւն է, որ պարոնն արդէն հասնում է իր նպատակին՝ չերամապահութեան արդիւնաբերութիւնը բարւոքելու և վերականգնելու նկատմամբ։

Ահա թէ ինչու համար էի խորհուրդ տալիս՝ չերամի սերմեր գնելու, կամ պայմանով վերցնելու համար, դիմել այս աշխատասէր մարդուն։

Պէտք է ասել, որ Աղդաշում և ուրիշ տեղեր շատ անդամ պ. Լերիսէի սերմերի անունով վաճառահանում այն ճապոնի հիւանդոտ սերմերը, որոնք շուտով ոչնչանում են, բոլորովին յուսահատեցնելով խեղճ զիւղացուն։

Այս ճշմարտութիւններից յետոյ՝ արդէն ինքն ըստ ինքեան հերքվում է «Մշակի» Աղդաշի յարգելի թղթակցի հաղորդած այն լուրը, իբր թէ՝ պ. Լերիսէի այս տարի Աղդաշ բերած սերմերի մի մասից որդներ չը դուրս եկան, իսկ դուրս եկածներն էլ երկու շաբաթվայ ընթացքում կոտորվեցին, որը արատապված էր և «Кавказъ» լրագրի այս տարվայ 162-դ համարում։

Աւելի հաստատ տեղեկութիւն տալու համար յարգելի ընթերցողներին, կաչխատեմ մի ուրիշ անդամ պ. Լերիսէի պարապմանց տեսակների և նրա զործադրած միջոցների մանրամասն նկարագրութիւնը զրել։

Մ. Ա.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 8-ին

Ամսոյս 6-ի երեկոյեան այս տեղ եղաւ մի ժողով զերասաններից և զերասանուհիներից բաղկացած։ Այդ ժողովի նպատակն էր միացնելով բոլոր թատրօնական խմբերը, ընտրելով մի քանի անձնաւորութիւններ, որոնց խորհրդով և թոյլտութեամբ պէտք է ընտրվեն պիեսաները և բաժանվեն դերերը և այլն., առաջն առնել այն պակասութիւնների, որոնք մինչև այժմ կրկնվում էին Երևանի բեմի վրա, այն է շատ անդամ բեմ էին դուրս գալիս անփորձ, թատրօնական զործին բոլորովին անծանօթ անձինք, զցում էին այսքանը. Պետերբուրգի 50 ուսանողներից կան գոնեա 10 երիտասարդ զեղեցիկ պատրաստված, բաւականին հմուտ թէ լեզուի և փոքր ինչ տեղեակ պատմութեան մէջ, լի աշխոյժով և վառված ուսումնասիրութեամբ։ Եթէ չը լինէր ցանկութիւն, ամեն շաբաթ դռան մօտ կանգնած չէին սպասի պատուելի պրոֆեսսորին, զործ դնելով այդ ժամանակը մի այլ հետաքրքիր և օգտաւէտ առարկայի վրա։

Շաբաթ օր է, առաջին լեկցիան է և ահա ինչ ենք լսում պատուելի պրոֆեսսորից. «Հայերը ոչ գրականութիւն և ոչ պատմութիւն ունեն, բացի մի քանի աստուածաբանական զրքերից. 2, 3, նշանաւոր պատմագրներից աւել ոչինչ չունենք։ Հայ ազգը կուլտուրա, քաղաքականութիւն, ինչպէս ունեցել են հռովմայեցիք և յոյները, չէ ունեցել. հայ ազգը ընդունակ չէ եղել կազմել մի զօրեղ քաղաքական կենտրոն, մեր ամբողջ պատմութեան մէջ մի փաստ չը կայ՝ ուր երևէր թէ հայերը մրցել են զիտակցաբար յայտնի դաղափարի համար (борьба за идею). հայը ունեցել է քաջ զինուոր, բայց երբէք ընդունակ առաջնորդ. հայը միշտ կատարել է կրաւորական (passif) և ոչ մի ինքնուրոյն դեր։» Կարելի է անվիճելի են պատուելի պրոֆ. այդ վերջին զիտական հետազոտութեան արդասիքը, բայց շատ ցաւալի է որ մենք ամենևին չը յափշտակվեցինք, մեր ունեցածը, մեր անցեալը քանդած ցան ու ցիր արած տեսանք, չը ստանալով ոչ մեր մտքի և ոչ մեր սրտի համար որոշ ուսումնական բաւականութիւն։

Ի հարկէ ցանկալի էլ չէր լինի, որ պրոֆ. Պ. նշանաւոր (միայն պ. Պալասանեանի համար) պատմագիր Իլօվայսկու պէս բացագանչէր թէ «արդարև և հայերը քաղաքակիրթ ազգ են եղել» (Վարժարան № № 1, 2, երես 65)։ Անբաւականներից մէկն էլ ես էի, հազար ու մէկ հարցեր և կասկածներ պաշարել էին զլուխս։ Համաձայն եմ որ պատմութեան մէջ այդ մեթոդը պիտի զործադրվի. կրիտիկան միայն կարող է լուսաւորել և տալ այն օրէնքները, որ հարկաւոր են պատմութեան համար։ Բայց կան առարկաներ, որ եթէ որոնում ենք ճշմարտութիւնը, պէտք է զինուորվենք մեր բոլոր ընդունակութիւններով, հետաքրքրվենք և ամենից առաջ սիրենք առարկան։

Եւրոպական և ասիական ազգերի պատմութիւնը ուսումնասիրելու ժամանակ մենք առաջ պիտի ընդհանուր հայեացք ձգենք տիեզերական պատմութեան վրա։ Եւրոպան կարողացաւ ընդունել նոր ուղղութիւն, հպատակեցնելով բնութիւնը մարդու իշխանութեանը, Ասիան միշտ թոյլ էր և բնութիւնը հպատակեցնում էր մարդուն։ Միայն այդ տեսակէտից կարելի է փիլիսոփա-պատմական եզրակացութիւններ անել։ Եթէ կամենում ենք բացատրել Հայաստանի պատմական երևոյթները, մենք առաջ պէտք է ուսումնասիրենք նրա նիւթական բնութիւնը, որովհետև բնութիւնը աւելի էր ներգործում մարդու վրա քան թէ մարդը բնութեան։ Ցայտնի է՝ որ այն երկրներում, ուր բնութեան զօրութիւնը խորտակում էր մարդուն, ազգի կուլտուրան զարգանում էր դանդաղ քայլերով և պրոգրես չը կար, կամ եթէ երևում էր, շուտով և դադարում էր. այդ երևոյթը վերաբերում է և Հայաստանին։ Հռչակաւոր Գիզոի մտքերը միշտ կը մնան անթառամ. նա ասում էր թէ պատմութիւն ուսումնասիրողը երեք պարտաւորութիւն ունի։ 1) Պատմարանը պէտք է հաւաքէ փաստեր և կարգադրի որոշ սիստեմայով. 2) երբ որ փաստերը հաւաքած են, նա պէտք է նրանց քննի, իմանայ թէ այս փաստը ինչ կապով է կապված այն փաստի հետ 3) պէտք է ոգևորի անցեալը տալով մեռածին կենսական շունչ։ Եթէ դառնանք դէպի մեր պատմութեանը կը տեսնենք 1) որ փաստերը հաւաքած են, բայց ոչ կարգադրված, 2) կրիտիկան, այսինքն փիլիսոփապատմական հետազոտութիւններ ամենևին չը կան, 3) եթէ ոչ փաստերն են կարգադրած, ոչ կայ կրիտիկա, հոգեշնչութիւնը բնական է նոյնպէս չի լինի։

Ազգերը միմեանց մօտ բնակվելով երբէք առանձնացած չեն մնում, նոքա ձգտում են յարակցութիւն ունենալ, ներգործել մէկ մէկու վրա. ազգերի ամբողջ կեանքը միմեանցից փոխառութիւն է և նմանութիւն։ Եթէ այս խօսքերից յետոյ մտաբերենք Հայաստանի դրութիւնը, յարաբերութիւնը ուրիշ ազգերի հետ, ասորեցւոց, հռովմայեցոց, յունաց և այլն, մենք հայ կուլտարայի մասին մի ուրիշ եզրակացութեան պիտի հասնենք։ Կուլտարա ասելով, մենք ասիական ազգերի կուլտարան պէտք է համեմատենք յունաց և հռովմայեցոց կուլտարայի հետ։ Ուրիշ արևելեան ազգերը ինչ կուլտարա են ունեցել։ Ո՞ր ազգը հին աշխարհում զիտակցաբար, յայտնի դաղափարի համար մրցել արիւն է թափել։ Դաղափարի համար կռուել կարող են միայն քաղաքականութեան զարգացմանը հասած նոր ազգերը. ամբողջ հին պատմութեան մէջ, թէ Հռոմ, թէ յունաց արշաւանքները իրագործվել են միայն այն նպատակով—որ հարստանան, կողոպտեն աւելի թոյլ ազգը, իրաւունք բանացնեն նրանց վրա, որոնք նուաղ և աղքատ են։

Մեր հոգեկան բնութեան երևոյթները միմեանց հետևում են միշտ յայտնի կանոններով։ Ինչպէս ապագան կապված է ներկայից, նոյնպէս և ներկան կապված է անցեալից։ Ինչպէս մի անհատի ներկայ դրութիւնը, թէ մտաւոր և թէ ֆիզիքական զարգացումը պայմանաւորված է եղել և ուղիղ հետևանք է նորա կրթութիւնից և երիտասարդական շրջանից, այնպէս էլ ազգերի ներկայ դրութիւնը, թէ նրա հարստութիւնը, թէ նրա աղքատութիւնը, թէ նրա ձգտումները—ժառանգութիւն են։ Եթէ, դիցուք ենթադրենք թէ հայերը եղել են մի աննշան, միշտ հպատակված ազգերից մէկը, ինչու միայն, մենք հայերս կարողացանք մեր հարևան արևելեան ազգերի մէջ պահել մեր լեզուն, մեր ազգային բնաւորութիւնը, և ինչու անյայտացան ասորիք, պարթևները, արաբացիք և այլն։ Երևի մեր ազգը ունէր մի զօրեղ բարոյական այժ։

Ս. Պետերբուրգ. Յ. Յովհաննիսեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՕՖ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Մեր համալսարանի հին ուսանող պ. Գ. Ե. միշտ ասում էր թէ հայոց լեզուն Պետերբուրգում կարողանում էին ուսանել միայն կազմելով իրանց մէջ զրականական երեկոներ, կարդալով լրագրներ և միմեանց հետ հայերէն խօսելով, իսկ մեր զիտնական պր. Պատկանեանը նրանց չէր օգնում և միանգամայն անտարբեր էր դէպի հայ ուսանողը։ Ես զարմացած վրան նայում էի, հաւատացնում էի, թէ, երևի, ուսանողները իրանք չէին յաճախում լեկցիաները և այլն։ Բայց զրժբախտաբար, պարոն Գ. Ե. խօսքերը իրագործվեցան։ Դիցուք թէ պ. Պատկանեանը չէ կամենում մեզ համար մի մտաւորական կենտրոն զառնալ (այժմ այդ այնքան էլ ցանկալի չէ), դիցուք ամբողջ ժամանակ զբաղված է թէ ուսումնական և թէ ֆինանսական հետազոտութիւններով (յայտնի է որ պ. Պատկանեանը Ломбардъ-ի դիրեկտորներից մէկն է), բայց հայ հասարակութիւնը և մենք ուսանողներս կարող ենք հարցնել թէ ինչու զիտական պրոֆեսորը քաշվում է ուսանողներից և աւելորդ է համարում որ և է կերպիւ նպաստել մեզ լեզուն և մեր պատմութիւնը ուսանելու։ Գուցէ գտնվեն մի քանիսները և կասեն թէ պ. Պատկանեանը ամեն շաբաթ մէկ ժամ (այսինքն 40 րոպէ) նուիրում է հայ ուսանողներին, կարդում և բացատրում է Եղիշէն կամ Խորենացին. ոչ, դա միայն ձև է և կորցրած ժամանակ։ Եթէ պատուելի պրոֆ. մեղադրի ուսանողներին ասելով թէ նրանք ինդիֆերենտ են, պատրաստ չեն (ինչու էք խորենացուն առաջարկում) ես կը պատասխանեմ միայն թէ դիտակցութիւն ունենալ, ներգործել մէկ մէկու վրա. ազգերի ամբողջ կեանքը միմեանցից փոխառութիւն է և նմանութիւն։ Եթէ այս խօսքերից յետոյ մտաբերենք Հայաստանի դրութիւնը, յարաբերութիւնը ուրիշ ազգերի հետ, ասորեցւոց, հռովմայեցոց, յունաց և այլն, մենք հայ կուլտարայի մասին մի ուրիշ եզրակացութեան պիտի հասնենք։ Կուլտարա ասելով, մենք ասիական ազգերի կուլտարան պէտք է համեմատենք յունաց և հռովմայեցոց կուլտարայի հետ։ Ուրիշ արևելեան ազգերը ինչ կուլտարա են ունեցել։ Ո՞ր ազգը հին աշխարհում զիտակցաբար, յայտնի դաղափարի համար մրցել արիւն է թափել։ Դաղափարի համար կռուել կարող են միայն քաղաքականութեան զարգացմանը հասած նոր ազգերը. ամբողջ հին պատմութեան մէջ, թէ Հռոմ, թէ յունաց արշաւանքները իրագործվել են միայն այն նպատակով—որ հարստանան, կողոպտեն աւելի թոյլ ազգը, իրաւունք բանացնեն նրանց վրա, որոնք նուաղ և աղքատ են։

Մեր հոգեկան բնութեան երևոյթները միմեանց հետևում են միշտ յայտնի կանոններով։ Ինչպէս ապագան կապված է ներկայից, նոյնպէս և ներկան կապված է անցեալից։ Ինչպէս մի անհատի ներկայ դրութիւնը, թէ մտաւոր և թէ ֆիզիքական զարգացումը պայմանաւորված է եղել և ուղիղ հետևանք է նորա կրթութիւնից և երիտասարդական շրջանից, այնպէս էլ ազգերի ներկայ դրութիւնը, թէ նրա հարստութիւնը, թէ նրա աղքատութիւնը, թէ նրա ձգտումները—ժառանգութիւն են։ Եթէ, դիցուք ենթադրենք թէ հայերը եղել են մի աննշան, միշտ հպատակված ազգերից մէկը, ինչու միայն, մենք հայերս կարողացանք մեր հարևան արևելեան ազգերի մէջ պահել մեր լեզուն, մեր ազգային բնաւորութիւնը, և ինչու անյայտացան ասորիք, պարթևները, արաբացիք և այլն։ Երևի մեր ազգը ունէր մի զօրեղ բարոյական այժ։

Ս. Պետերբուրգ. Յ. Յովհաննիսեան

թէ թատրոնի և թէ լաւ դերասանների վարկը, զզվեցնում էին հասարակութեանը: Գովութեան արժանի միտք և կարգադրութիւն: Բայց բանը նրանումն է, որ այս թատրոնական ժողովի վարչութեան իրաւունքները սահմանափակվում են ոչ թէ միայն մի քանի խմբերով, այլ նորա իրաւունքները տարածվում են Երևանում լինելի բոլոր հայ ներկայացումների վրա: Այսուհետև ինչ խումբ կամ ինչ նպատակով ներկայացում լինի տալու, պէտք է թոյլտուութիւն խնդրի այդ վարչութիւնից: Իցէ թէ մի խմբի մէջ լինեն անփորձ անձինք կամ նպատակը չը համապասխանէ վարչութեան նպատակին, թոյլ չը պէտք է տրվի ներկայացումը (կը պատահի անձնական հաշիւներից էլ, ինչպէս այդ միշտ կրկնվել է մեզանում): Անկարելի է այդ արգելումների առաջը առնել, որովհետև Երևանում կայ միայն մի Գայանեան օրիորդաց դպրոցի բեմ, այդ էլ գտնվում է տեսչուհի օր. Գայանէ Յովհաննիսեանի իրաւանց տակ, որը լինելով անդամ այդ վարչութեան, ոչ մի կերպ չէ կարող հակառակ դնալ վարչութեանը (մասնաւոր խմբերին բեմը տալով):

Այժմ մասնաւոր կէտից նայենք այդ վարչութեան գործունէութեան օկտակարութեան և վընասակարութեան վրա: Մենք բոլորովին համակիր ենք այն մտքին, թէ այսուհետև Երևանի բեմը չի ունենայ անփորձ դերասաններ, նաև համակիր ենք և այդ կարգադրութեանը, բայց ինչ օգուտ է տեսել ժողովը այն բանի մէջ, որ իր իրաւունքները տարածում է և մասնաւոր, ժամանակաւոր (ոչ մշտական) խմբերի վրա: Այդ բանի մէջ մենք ոչ մի օգուտ չենք կարողանում տեսնել: Ահա ինչու:

Մասնաւոր խմբերը, որոնք եթէ մի բարի նպատակի համար դրամ էին ուզում ձեռք բերել, մինչև այժմ զիմում էին թատրոնին, ընտրում էին պիեսներ, պատրաստում էին դերեր և բեմ դուրս գալով մի կամ երկու շաբաթից յետոյ կարողանում էին առանց դժուարութեան փող ձեռք բերել ու կարդարել: Այսուհետև այդպիսի խմբերը ինչպէս կամ ինչ միջոցով պէտք է կարողանան դրամ ձեռք բերել եթէ արդելվի նորանց, իբրև անփորձների, ներկայացում տալը: Այո, կասեն, եթէ թոյլ տրվի այդպիսիներին բեմ դուրս գալը, նախ կը զցեն թատրոնի վարկը և ժողովրդին կը զզվեցնեն թատրոնից: Իսկ ես կասէի. ինչքան էլ այդ բանը վնասի թատրոնին, ինչքան էլ ժողովուրդը զզվի անփորձների բեմ դուրս գալուց (որը շատ հեշտ կարելի է ուղղել մի քանի լաւ ներկայացումներ տալով), այնու ամենայնիւ ունի իր օգուտները,—դրամ ձեռք բերելով և գործադրելով բարի գործի, այդ խմբերը մասնաւորապէս նպաստում են բարեգործութեանը, հետևապէս կարող են և թեթևացնել Բարեգործական ընկերութեան գործերը: Մի օրինակ: Վաղարշապատից մի խումբ պատրաստվում է այս օրերս գալ այստեղ և մի ներկայացում տալ յօգուտ Վաղարշապատի ուսումնարանների, որոնք, ինչպէս պատմում են, այս տարի հաղիւ հաց չը փակվեցին փողի պակասութեան պատճառով: Հիմա եթէ մեր թատրոնական ժողովի վարչութիւնը, իր նպատակին, կամ լաւ ևս ասած կանոնադրութեանը համեմատ արգելի այդ խմբին, (որովհետև մի կողմից անծանօթ լինելով մի քանիներին և միւս կողմից գտնելով այդ խմբի մէջ անփորձներ) ինչ պէտք է անի խումբը, իր պատրաստութիւնով և ճանապարհածախսով աւելի ծանրացնի ուսումնարանի դրութիւնը: Գուցէ այս բանում նայելով նպատակին, վարչութիւնը համաձայնվի թոյլատրել ներկայացում տալ, բայց այսպիսի խմբեր այլ և բարեգործական նպատակներով չատ են պատահում, որտեղից նոքա պէտք է դրամ ձեռք բերեն, գործադրելու իրենց նպատակին:

Այո, չատ լաւ կը լինէր, եթէ այդ վարչութեան կարգադրութեամբ առած ներկայացումների փողերը դումարվէին վարչութեան ձեռքը և այդ պատահական, ժամանակաւոր խմբերին տրվէր այդ դումարից գործադրելու: Բայց այս բանը կարելի է տեսնել միայն երևակայութեան մէջ և ոչ իրականապէս:

Ուրեմն թատրոնի միջոցով ևս, ինչպէս տեսնում ենք, փող ձեռք բերելը չատերին այսուհետև անկարելի պէտք է լինի Երևանում: Ինչ և իցէ սպասենք գործի վերջանալուն. յոյս ունենք կանոնադրութիւնը այնպէս կը կազմվի, որ մեր գործող այժերը չը թուլանան յուսահատվելով փողի պակասութիւնից:

Կրկնում ենք. մենք հակառակ չենք այն կարգադրութեանը, թէ չը թողնել անփորձներին բեմ դուրս գալ, որով կարող է թատրոնի վարկը ընկնել. մենք աւելի ուրախ ենք, միայն ցանկանում ենք, որ իրաւունքը (վարչութեան) տարածվէր միայն մի քանի մշտական խմբերի վրա, այդ ժամանակ մասնաւոր և ժամանակաւոր խմբերը բոլորովին չէին զրկվի թատրոնի միջոցով դրամ ձեռք բերելուց:

Տեղիս ֆինանսական այժը կազմում է վաճառականութիւնը, և հիմա էլ ամենքին յայտնի է, որ առանց փողի ոչինչ առաջ չէ գնում: Դրան ապացոյցն է Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի կազմելը: Զը նայելով, որ առաջի ժողովում կային մօտ 50 հոգի, վարչութեան անդամներ ընտրելում նոյնպէս, այնու ամենայնիւ վաճառականներ ընդամենը 8 հոգի չը կային, ուրեմն ինչ օգուտ կարող է սպասել Բարեգործական ընկերութիւնը Երևանի զրամատէր վաճառականներից, մինչդեռ նոքա, չը համակրելով ընկերութեանը, չեն էլ ուզում ներկայ գտնվել:

Նոքա ինայում են տալ ընկերութեանը տարեկան 5 ռուբլի դրամական վճարը, բայց քէֆ անելում, հիւրեր պատուելում, կարտ խաղալում հարիւրներ մսսելիս չեն էլ զլում փողի գնալը: Իսկ եթէ խնդրես մի երկու ռուբլի նուիրել ժողովրդին «քանդվեցի» կաղաղակէ:

Դէհ, այսպիսի հանգամանքների մէջ, այսուհետև, ինչպէս, ինչ միջոցով խեղճ երիտասարդական խմբերը պէտք է փող դուրս բերեն վաճառականի գրպանից, բարեգործական նպատակների համար գործադրելու, այն ինչ որանից առաջ այդ միջոցը ներկայացումով վարձատրութիւնն էր:

Ս. Տէր-Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 նոյեմբերի

Անհերքելի ճշմարտութիւն է, որ մի որ և է գործառնութեան (предпріятіе) յաջող ընթացքը, քաղցր ապագայ և բարի վախճան ունենալու գլխաւոր պայմանն է համերաշխ գործունէութիւնը: Այս անուրանալի փաստը և նրա անփոխարինելի օգուտները ոչ սակաւ ժամանակից ի վեր են լուսաւոր աշխարհից ճանաչված: Այո, վերջինս վաղ հասկացաւ միութեան մեծ շահը և վաղուց սկսեց ուսումնական, առևտրական, արուեստական և այլն և այլն ընկերութիւններ կազմել, զանազան հիմնարկութիւններ հաստատել, միասին խորհրդակցել և միասին գործել և այսօր դրա չնորհիւ է, որ այնպիսի բարեբաստիկ և երջանիկ դրութեան մէջ է: Եթէ այսօր գոնէ մենք բաղդ ենք ունենում մեր ձեռքերի վաստակը աւելի թեթևացրած տեսնել ունենալով այլ և այլ մեքենաներ և այլն, այդ բոլորը դարձեալ ընկերովի գործողութեան պտուղ են: Աւելորդ եմ համարում այստեղ հանրածանօթ փաստերով մեկնել ընկերակցութեան անչափ առաւելութիւնը. թողնենք բոլորը, հէնց նայենք երէկուան ընկերութեան վրա, որը ոչ հեռու անցեալում այնքան մեծ օգտութիւն և կարողութիւն հաստատեց երիտասարդների գաղթականութեանը դէպի Ամերիկա, ամեն միջոցներով նպաստելով նրանց, պահպանելով և ուղեկցելով նոցա ունեցած չունեցածը և այլն: Այդ էլ հեշտ բան չէր տասնեակ հազար ընտանիքներ իրանց ունեցածով լիովին, առանց մեծ զրկանքների, հազարաւոր վերստեր հեռու տեղափոխել: Եթէ մենք էլ նոյնչափ գոնէ բաղդաւոր գտնվէինք, այսօր մեր համարիւն գաղթականները Ղարսի և այլ նահանգներում մերկ, ոտաբոբիկ դնոից դուռ չէին մուրայ: Խօսենք մեզնից աւելի մօտիկի վրա. ընկերութեան չնորհիւ չէ՞ որ Բաքուում «Նորէլ» ֆիրման նաւթային գործը իր ձեռքը զցեց, խլելով բընիկներից իրանց բնատուր բարիքից օգտվելու կարողութիւնը: Ընկերութեան չնորհիւ չէ, որ այսօր նա մեծ մեծ գործեր է սկսում, սեփական ջրանցքներ է ուզում չինել տալ, կապակցութեան մէջ է մտած երկաթուղիների վարչութեանց հետ սեպհական նաւթաքարշ վագոններով իր նաւթը հեռաւոր տեղեր տեղափոխելու համար, սեպհական չոգենաւեր է պատրաստում Կասպից ծովի ափերում և այլն և միթէ, եթէ մեր հայ գործարանատէրերը միասին միանալով մի մեծ ընկերութիւն կազմէին, աջողութեամբ չէին մրցի նրա դէմ, որպէս զի իրանց երկրի օգուտը իրանք առնէին: Կարող էին, այո, և համարձակ, եթէ անէին: Բայց ցաւն այն է, որ մեր հայերը ձգտում են միայն դէպի անձնական գործը. ամեն անհատ ուզում է գործել միայն իր խելքով, իր համար առանձին և բացի այդ հնամոլութեամբ անպատուութիւն է համարում մէկի հետ ընկերանալ, որովհետև կասկածում է որ կասեն. «խեղճ, փող չունէր, որ առուտուր անէր, գնաց սրա նրա փէշիցը բռնեց». բայց լուսաւորեալ երկրում մի որ և է հիմնադիր կամ վաճառական, եթէ ինչ ինչ պատճառներով չէ կարողացել կոմպանիա կազմել որ և է մէկի կամ մի քանիների հետ, նա իրաւ պատիւ է համարում ֆիրմային գոնէ կեղծ C-ie կամ K° մասնիկը աւելացնել. իսկ մեզ մօտ դրա փոխարէն պատիւ են համարում մէկ մէկուց մուչտարին քաշել, կորզել: Մեր Կովկասի առաջի լուսաւոր քաղաքն է Թիֆլիսը. մտէք նրա «Բազարխանան», ուր ամենախոշոր առևտրականներն են, մի արշին կտաւ առնելու. և կը տեսնէք ամեն կրպակից անքաղաքավարի աղաղակներով ձեզ իրանց մօտ կը կանչեն, երբեմն կը դան մի մաղալինից փեշիցդ բռնելով տանել միւսը. այդ ժամանակ եթէ «ուստա» մարդ ես, կառնես իսկական գնից մի երկու կօպէկ էլ պակասով, իսկ եթէ «խամ» ես անշուշտ հինգ կօպ. աւել կը վճարես, որ «ուստա» մարդու տարած պակասը լրացնես: Մտիր մեր գործարաններից մէկը, օրինակ ծխախոտի գործարանը. դուրս գալիս կը տեսնես դրան մօտից ոչ այնքան հեռու մէկը քեզ սպասում է. «այդտեղ ի՞նչ էիր առնում, մի քանի օր սպասիր և ես նրա ֆիրմայի նման էտիկէտներով կը չինեմ և 5% էլ աւել զիջում կանեմ, աւելի լաւ է ինձանից առ»: Եւ ահա նա առնում է իր մօտ և իրան նմանը չինում, 5% էլ աւել զիջում անում, բայց և իր շահը յայտնի % ևս վաստակելու համար ապրանքի տեսակը ստորացնում: Դրա հետևանքը այն է լինում, որ գործածողը գտնելով ապրանքը աւելի ստոր յատկութեամբ, թողնում է ասելով «սա էլ խարաբ արաւ»: Այդպիսով կորչում է թէ լաւի և թէ վատի վարկը, ընկնում է առուտուրը: Ահա այս է պատճառը, որ մեզանում գործարանական գործը օրից օր առաջ չէ գնում և ի հարկէ այս բոլոր չարիքի պատճառն անհամերաշխութիւնն է:

Բայց բարեբաղդաբար վերջերումս ահա մեզանում էլ սկսում են հասկանալ ընկերովի գործելու անհամեմատ առաւելութիւնը, որի օրինակը առիթ ունեցանք տեսնել Թիֆլիսում «Կովկասեան ընկերութիւնը ապտեկայի իրեղէններ ծախելու» Նորերումս կառավարութիւնից հաստատված ընկերութեան մէջ: Ուրախալի երևոյթ է այս: Յոյս ունենք, որ մեր միւս առևտրականները, ինչպէս սովորութիւն ունեն հետևել նոր սկսած գործին, բարի օրինակ առնելով կը հետևեն և սրան, զանազան առևտրական ընկերութիւններ հաստատելով:

Յովհաննէս Ս. Ստեփանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 13 նոյեմբերի

Վերջին տասը տարիների ընթացքում մարդկերանց հագուստների դերձակութիւնը համարեա բոլորովին ընկաւ:

74 թվից առաջը ստացած բազմաթիւ պատուէրները դերձակութեան յիշեալ ճիւղի համար նախանձելի ապագայ էին խոստանում: Իւրաքանչիւր ոք իր որդու արհեստի պարապմունքը ընտրելիս դերձակութեան մարդկերանց հագուստի բաժանմունքը աչքից չէր թողնում, շատ անդամ նախադասելով ուրիշ արհեստներից: Այդ ժամանակվայ ամեն մի արհեստանոց ստանում էր այնքան պատուէրներ, որ ոյժից վեր էր նորանց կատարելը. դորա համար նոքա պարտաւորված էին տարվայ $^3/_4$ մասը առաւօտեան 6 ժամից մինչև երեկոյեան 12 ժամը անընդհատ գործելուց բաց մինչև անդամ կիրակի օրով բանելու, նոյնպէս և շատ անդամ ամբողջ գիշերներ լուսացնելու: Զը նայելով Ռուսաստանի զանազան տեղերից եկած քարդահների նշանաւոր թիւին և տեղական կազմվող այժերի զարգանալուն, դարձեալ գործողի մեծ պակասութիւն էր զգացվում. մի խօսքով դերձակութեան նախանձելի ապագան փայլում էր ամեն կողմերից: Ցեղական (ասիական) հագուստների եւրոպականի փոխվելը մի զօրեղ նեցուկ էր դերձակի ցանկալի դիրքը հաստատ պահելու համար, որին սպառնացող վտանգը ոչ ոքի մտքովն էլ չէր անցնի:

Բայց աւաղ երկար չը տևեց դերձակի նախանձելի դրութիւնը:

74 թվից սկսեցին Երևան գալ Օդեսայի և գլխաւորապէս Վիեննայի պատրաստի հագուստները, որոնք նպատակաւոր կերպով մրցման ասպարէզ էին ուղարկված: Դերձակները առանց հասկանալու վտանգի մեծութիւնը մնացին անտարբեր, կարծելով որ ոչինչ նշանակութիւն չունի պատրաստի հագուստների երևան գալը, որ պատուիրողը պատրաստին չի գնի թէկուզ ձրի էլ լինի: Այսպէս անտարբեր դերձակները անցկացրին ութն ամբողջ տարիներ մինչև որ օրինակի համար մրցման ասպարէզ ուղարկված հագուստները տեղ տուին աւելի գօրեղ մրցման առաջ գալուն, մինչև, որ իրանց խանութների թւով պատրաստի հագուստներ ծախող խանութներ բացվեցան:

Դերձակներից դորանից աւելին հաղիւ թէ կարելի լիներ սպասել, բայց քաղաքատնտեսներին (եթէ ունենք) այդ ներելի չէ, որ իրանց աչքի առաջ կատարվէր մի այսպիսի գործողութիւն, որտեղ քաղաքը կորցնում է մի յայտնի արդիւնաւոր արհեստ. դա քաղաքական մի նշանաւոր կորուստ է, երբ մի յայտնի թիւ գործող արհեստագէտ մարդիկների զրկվում են իրանց խաղաղ աշխատանքի արդիւնքից և տեղ են տալիս մի այնպիսի մրցման, որից ոչինչ չահ չունի ոչ քաղաքի արհեստաւորը և ոչ նոյն իսկ քաղաքը, այլ շահվում են մի այլ օտար երկրի արհեստաւորները, որոնք ոչինչ կապ չունեն Թիֆլիսի շահերի հետ. մի և նոյն ժամանակ բացվում է Թիֆլիսի Միքայէլեան արհեստանոցը և դերձակութեան այդ արդիւնաւոր ճիւղի մասին ոչ ոք չէ էլ մտածում:

Մարդկերանց հագուստների դերձակութիւնը, որ 74 թվին բոլոր արհեստաւորների նախանձը էր շարժում, այսօր Եւրոպայի արհեստանոցներից իր կարճատես ներկայացուցիչների չնորհով մրցված լինելով հանդերձ Միքայէլեան արհեստանոցի ծրագրից էլ բաց է մնում, որի հետևանքը դժուար չէ երևակայել: Մարդկերանց հագուստների դերձակութեան անկումը մի սկված գործ է և դժբախտաբար կէս ճանապարհը անցած պէտք է համարել:

Եթէ պատուիրվող հագուստների թիւը պէտք է 100,000 լինէր, այժմ 50,000 է, հետևապէս երկու անդամ պակասել է գործողների թիւը և սպասելի արդիւնքը. վնասը իւրաքանչիւր տարի 500,000 ր. աւելի պէտք է համարել բացի այն, որ դերձակութեան մեր մէջ ընկնելով, ընկնում է և մահուդի առևտուրը, որի ապացոյցը պիտի այն համարվի, որ չը նայելով կանանց սեռի մահուդի հագուստի վերջին տասը տարվայ ընթացքում անհամեմատ մեծ չափով պահանջին, այնու ամենայնիւ մահուդի առևտուրը կրիայի քայլերով է առաջ գնում: 74 թվին մենք ունէինք այնքան մահուդի խանութներ, որքան այժմ ունենք:

Մահուդի առևտուրը անմիջապէս կապված է դերձակութեան արհեստի յիշեալ բաժանմունքի հետ. ընկնելով դերձակութեան արհեստը, պիտի ընկնի և մահուդի առևտուրը, որը կրկնապատկելով յիշված վնասի քանակութիւնը աւելի մեծացնում է այն պատասխանատուութիւնը, որը մեր կարծիքով ընկնում է մեր քաղաքատնտեսների վրա:

Ցաւով ենք, որ «Մշակի» պատւական խմբագիրը այս երկտող գրվածքին տեղ կը տայ իր պատւական օրաթերթին մէջ:

Գրիգոր Անիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դոկտոր Անդրէաս Արծրունի հաղորդում է մեզ հետևեալ հետաքրքիր լուրը: «Նորերումս առիթ ունեցայ դէպի Հարց լեռները իմ արած ճանապարհորդութեանս ժամանակ ծանօթանալ հայազգի գօկտոր Լաուէրի հետ, որ հրատարակել է հայոց քերականութիւնը գերմաներէն լեզուով և նմանապէս Մովսէս Խորենացու և Փաւստոս Բիւզանդացու թարգմանութիւնները: Նրա քերականութիւնը, ինչպէս նա ինձ պատմեց, թարգմանվեցաւ Նորերումս ֆրանսերէն լեզուով և երկրորդ ապագրութեամբ պիտի գերմաներէն էլ լոյս տեսնի չատ փոփոխված և ուղղված: Պ. Լաուէր արդէն պատրաստի ունի Զէյնոր Գլակի և Յովհաննէս Մամիկոնեանի գերմաներէն թարգմանութիւնները և դիտաւորութիւն ունի, եթէ ժամանակը նրան ներէ, չուտով ձեռնարկել «Հայոց գրական-

նութեան պատմութեան» հրատարակելուն, բայց ոչ ամբողջ, այլ գլխաւորապէս Արշակունեաց ժամանակակից և մատիր է շարունակել նրան մինչև 6-որդ կամ 7-որդ դարը, եթէ չեմ սխալվում։ Պ. Լաուէր Մէրզբուրգ քաղաքումն է ապրում միշտ, որի ուսումնարանական շրջանի վերատեսուչն է նա։»

—

«Մշակի» № 211 մէջ Ախալքալաքից գրված նամակում մնացել է մի շատ մութ և անհասկանալի տեղ։ Նամակագիրը գովում է հայր Դիմիրջողլեանցին և պ. Մառանկոզեանին և գանգատվում է որ այդ պատւական և եռանդոտ երիտասարդներին օգնող չը կայ իրանց գործունէութեան մէջ։ Յետոյ ասում է որ այդ նշանակութիւն ունեցող մարդիկ լաւ պատուղներ չեն։ Պարզ է որ այդ մեղադրանքը չէ վերաբերվում վերոյշեալ պարոններին, բայց մութ տեղեր միշտ լինում են, երբ մարդիկ գրել չը գիտեն։ Հայերի մեծ մասը կանոնաւոր կերպով գրել ու մտածել չը գիտէ. մի բան ասում են, բայց բոլորովին ուրիշ բան պէտք է հասկանալ։ Նամակագիրը ուզում էր «այդ» բառը վերաբերել այն մարդկանց, որոնք չեն օգնում Դիմիրջողլեանցին և Մառանկոզեանցին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կէս դար խելագարների մէջ։ Վիէննայի գժանոցի ամենահին անդամը համարվում է տիկին Գ., որը յիսուն և մէկ տարի է արդէն այնտեղ է գտնվում։ Այդ գժանոցը տարել են նրան 32 տարեկան հասակում։ Խելագարութեան շարժառիթը սէրն էր դէպի մի երիտասարդ մարդ, որի հետ նա ծանօթացաւ մէկ խնջոյքում և որը թողեց նրան։ Յուսահատութիւնից նա խելագարվեցաւ։ Իրաքանչիւրին, ով այս յիսուն տարիների ընթացքում գժատուն էր գալիս, դիմում էր և դիմում է մէկ ֆրազայով։ «Ե՞րբ կը լինի կրկին խնջոյք»։

* * *

Եւրոպական քաղաքների ստատիստիկա։ «Petersmanns Mittheilungen» ամսագրի վերջին համարից երևում է, որ եւրոպական միայն չորս քաղաքներ ունեն մէկ միլիոնից աւելի աղգաբնակութիւն, այն է՝ Լօնդոն 3,822,440 բնակիչներ (աւելի քան թէ ամբողջ Սակսոնիան կամ Շվեյցարիա)։ Փարիզ ունի 2,225,910 բնակ. աւելի քան ամբողջ Աւստրալիա, կամ Տունիս, Բոլղարիա, Յունաստան և այլն)։ Բերլին—1,222,500 բնակ. և Վիէննա—1,103,110։ Ապա գալիս են Պետերբուրգ և Մոսկվա, յետոյ Կ. Պոլիս 600,000 բնակիչներով։ Եւրոպայի բոլոր մնացած մեծ քաղաքները 600,000-ից պակաս բնակիչներ ունեն։ Եւրոպայի հետևեալ տասն և երեք քաղաքներից իրաքանչիւրը 200,000 բնակիչներ ունեն, այն է՝ Շեֆֆիլդ, Բրէսլավլ, Տուրին, Լիսսաբոն, Պալերմո, Կոպենհագէն, Մինխէն, Բուխարէստ, Բորդո, Դրէզդէն, Բարցէլոնա, Էդինբուրգ և Բրիստոլ։ Վարշավա 339,340 բնակիչներ ունի։

* * *

Օտարոտի աղօթք։ Օհիոում ապրում է Բիվեր անունով մի ծերունի, իր չորս սատիկ անպիտան որդիներով, որոնք անդադար ծաղրում էին իրանցից ոչ հեռու ապրող ծերունի պատօրին։ Մի քանի ժամանակից յետոյ, որդիներանցից մէկին կծեց չչող օձը և մահից վախենալով, հրամայեց պատօրին հրաւիրել։ Քահանան եկաւ և երիտասարդին կատարելապէս ապաշաւած գտաւ, այն ժամանակ նա ժողովեց բոլոր ընտանիքը, հրամայեց բոլորին իր հետ միասին ծնկաչոք ընկնել և կարդաց հետևեալ աղօթքը. «Տէր, շնորհակալ են Քեզանից չչող օձերի համար և կրկին գոհութիւն ենք մատուցանում Քեզ այն բանի համար, որ չչող օձը կծեց Զիմին։ Խնդրում ենք Քեզանից, ուղարկիր կրկին օձին, որ նա կծի Զօնին, և ուրիշ օձին, որ կծի Բիլլին, և երրորդին—Սամին կծելու համար։ Տէր, ուղարկիր, վերջապէս, Քո հրամանի տակ գտնված օձերից ամենամեծ չչող օձին, որը կծէր նրանց հօրը, որովհետև միայն չչող օձերը կարող են ստիպել Բիվերի ընտանիքին ապաշխարել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՊԵՐՄ, 12 Նոյեմբերի։ Բերեզնիկովսկի աղահանքերի մօտ սօդայի գործարան է կառուցվում, որ տարեկան 500,000 պուդ սօդա պէտք է պատրաստէ։

ՖԻԼԻՊՕՊՕԼ, 12 Նոյեմբերի։ Արևելեան Ռումելիայի մէջ ուղղափառ քահանաների կատարեալ պակասութիւն կայ և այդ պատճառով երկու ամիս եկեղեցիները փակված են։

ԲԵՐԼԻՆ, 12 Նոյեմբերի։ Իշխան Բիսմարկի „Nord Deut. Allg. Zeitung.„ լրագիրը Ռուսաստանին անուանում է ամենանշանաւոր մրցող Գերմանիայի հետ անտառային գործում։ Պրուսական ժողովի մէջ մինիստրները յայտնեցին, թէ անհրաժեշտ է բարձրացնել փայտի վրա մաքսահարկը։

ՓԱՐԻԶ, 12 Նոյեմբերի։ Լիոնի և Սենտ-Էտիենի մէջ կալանաւորված են 32 անիշխանականներ, որոնց թիւումն են, ինչպէս կարծում են, կուսակցութեան գլխաւոր առաջնորդները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 Նոյեմբերի։ „Прав. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, որ կողմնակի հարկերի բաժինը յայտնում է Ռուսաստանի և Լեհաստանի ակցիզային կառավարիչների՝ գրաւականներ ընդունել ամենայուսալի բանկերի արժեթղթեր։ Ներկայ տարվայ ընթացքում մինչև հոկտեմբերի 1-ը պետական եկամուտներ ստացված են 397,051,135 ր., անցեալ տարվանից 44,191,975 ր. աւելի, մանաւանդ մեծացել է խմիչքների, շաքարի ակցիզը և մաքսահարկը։ Ծախսեր եղել են 396,923,073 ր., անցեալ տարվանից 2,682,440 ր. պակաս։ Ս. Պետերբուրգի համալսարանի մէջ անկարգութիւններ եղան. նոյեմբերի 10-ին ժողով էր նշանակված կազանի ուսանողներին համակրութիւն յայտնելու և բողոքելու համար այն միջոցների դէմ, որոնք գործադրվել են հոկտեմբերի անկարգութիւնների պատճառով։ Չը նայելով համալսարանական իշխանութեան և խոհեմ ընկերների խորհուրդներին, աղմկալի ժողովը շարունակվում էր։ Որովհետև ուսանողները մերժեցին պոլիցիային և պոլիցմէյստերին, որոնք եկան համալսարանը, ներկայացնել իրանց տոմսակները և շարունակեցին կազանի ուսանողներին համակրութեան յայտնելը, խռովարարները տարվեցան Պավլովսկի ուսումնարանի մանեժը և այնտեղ ցուցակագրվեցան։ Ցուցակագրվածները 280 հոգի են, մօտ 180 արձակված են, մնացածները կալանաւորված են։ Նրանցից 14 մարդ գլխաւոր առաջնորդները ուղարկված են իրանց ծնողների մօտ։ Համալսարանից կարտաքսվեն ժողովին և անկարգութիւններին գլխաւոր մասնակցողները։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ երէկ կալանաւորվածների բօտայի շինութեան մէջ խարկովում կախված է Բէլօուսով։ Քահանան խօսում էր նրա հետ 22 բոպէ։ Դատավճիռը լսելուց յետոյ Բէլօուսով խաչակնքվեցաւ և համբուրեց խաչը։ Ինքը օգնեց դահճին պատանքը հագցնելու ժամանակ և հասատ քայլերով բարձրացաւ կախաղանի վրա։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ Սկօբելևի ցուցակագրված կայքերը բաղկացած են կալուածքներից և գումարներից։ Ընդհանուր արժողութիւնը մէկ և կէս միլիոն է։ Նրան կը ժառանգեն քոյրերը։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ, 12 Նոյեմբերի։ (Պաշտօնական հաղորդութիւն)։ Ռուս արդիւնաբերող Բաբիկովի յայտնութեան համեմատ սառուցների մէջ սեղմված դանիական շոգենաւ „Dimphna“ աջողութեամբ հասաւ Վայդաչ, որտեղ կանցնէ ձմեռը։ Բաբիկով տունդրաներով անցաւ 800 վերստ և հոկտեմբերի 29-ին „Dimphna“ շոգենաւից նամակներ հասցրեց Մեզենսկի պրիստավին, որ նրանց ուղարկեց Արխանգելսկի դանիական հիւպատոսին։ Շոգենաւը անվնաս է։ Ծառայողները առողջ։ Պաշարեղէն կայ։ Նովայա Զէմլիայի մօտ ձմեռում են երեք ուրիշ շոգենաւեր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Նոյեմբերի։ Պարտամուրհակների կուրսը բարձրանում է, ֆօնդերը ամրանում են։

ՐԵԱԶԱՆ, 13 Նոյեմբերի։ Հոգաբարձունների ընդհանուր հաշուի մէջ Սկօպինի բանկի պարտքը դուրս է բերված 12,077,287 ր.։ Պարտքերը ծածկելու համար կան. ժամանակաւոր պարտամուրհակներ 8,299,457 ր., ժամանակն անցած 3,108,717 ր., ուրիշ աղբիւրներ մօտ 400,000 ր.։

ՕԴԷՍՍԱ, 13 Նոյեմբերի։ Գանձապետի օգնական կվարտիրօվիչ մեղադրված է 47,000 ռուբլի վատնելու մէջ։ Օդէսսայի գանձարանից։ Նա դատապարտված է բոլոր իրաւունքներից զրկվելուն և աքսորանքին ցօբոլի նահանգը։ Գանձապետ Ունտիլովին նախատինք է յայտնված գանձարանը անփոյթ պահելու համար։ Օդէսսայի համալսարանի մէջ նոյեմբերի 18-ին կը քուէարկվի ցիտովիչ առևտրական իրաւունքի ամբիոնի համար։

ՓԱՐԻԶ, 12 Նոյեմբերի։ Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր ամուսնի հետ եւրէկ ուղևորվեցաւ Բերլին։ 1882 թ. սպասվում է 80 միլիոն դեֆիցիտ։ Հանրապետութիւն հիմնելուց յետոյ Ֆրանսիայի մէջ դա առաջին դեֆիցիտն է։

ԲԵՐԼԻՆ, 13 Նոյեմբերի։ Պարանների գործարանատէրերին հարց է առաջարկված արդեօք կարելի է բուսականաալ առանց ռուսաց կանեփի։ Գերմանական դեսպանը Ս. Պետերբուրգի բարձր Շվէյնից ուղևորվեցաւ Վարշին իշխան Բիսմարկի մօտ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Նոյեմբերի։ „Прав. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ երէկ կայսրուհին Ս. Պետերբուրգի մէջ էր, ներկայ էր Մարիայի կանանց առաջին ուսումնարանի բացմանը, այցելեց կոյր երեխաների ուսումնարանը և երեկոյեան Գատչինօի պալատի մէջ տելեֆօնով լսում էր „Բիգոլետտո“ օպերան, որ խաղացվում էր Մարինսկի թատրօնի մէջ։ Երգեցողութիւնը, խօսքերը և երաժշտութիւնը շատ լաւ են լսվում։ Ներքին գործերի մինիստրութենից նահանգապետների ուղարկված շրջաբերականով յիշեցնվում է զինուորների վարչութեան պարտականութիւնը։ Զինուորների արձակման ժամանակ ծառայութենից, որոշել արձակվողը ընդունակ է թէ ոչ աշխատելու համար, որպէս զի անընդունակները չը զրկվեն թօշակից։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ գիւղացիներին բաժիններ տալուց և մայրատներ կազմելուց յետոյ գանձարանի իրաւասութեան տակ մնացած հողերը այսուհետև էլ կապալով կը տրվեն 12 տարի ժամանակով։ Կախանովի մանաժողովը նախագծում է ուրիադնիկներին ժանդարմներով փոխարինել, մեծացնելով վերջինների թիւը մինչև 40,000։

ՄԱԴՐԻԴ, 13 Նոյեմբերի։ Քննադատվում են միջոցներ անիշխանականների դէմ, որոնք ցոյցեր են անում Անդալուզիայի մէջ։ Շատերը կալանաւորված են։ Որովհետև սպանիական և ֆրանսիական անիշխանականների մէջ կապ կայ, սպանիական և ֆրանսիական կառավարութիւնները բանակցում են այդ հարցի մասին։

ՓԱՐԻԶ, 13 Նոյեմբերի։ Լիոնի մէջ անիշխանականների կալանաւորուածները շարունակվում են։

ԼՕՆԴՕՆ, 13 Նոյեմբերի։ Էդինբուրգի դուքսը հիւանդացաւ բրօնխիտով։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ, 14 Նոյեմբերի։ Այստեղ ձմեռում են 1,000 նաւեր։ Ենթադրված է 38 սառցահատ պատրաստել։

ՕԴԷՍՍԱ, 14 Նոյեմբերի։ Ամեն օր մեծ քանակութեամբ ուխտաւորներ ուղևորվում են Երուսաղէմ։ Երկաթուղու գծի վրա Կիեվի և Կազատինի մէջ ճնակոյտեր կան։

ՐԻԱԶԱՆ, 14 Նոյեմբերի։ Բիկով խոստովանվեց, որ արհեստական բալանս էր դուրս բերում և կեղծ դիվիդենդ։ Նաղդ հատուցումները դեֆիցիտ տուին։

ԿԱԶԱՆ, 14 Նոյեմբերի։ Համալսարանի խորհուրդը բէկտոր ընտրեց Բուլիչին։

ՕԴԷՍՍԱ, 14 Նոյեմբերի։ Զինուորական-նահանգական դատարանը վճռեց, ինտենդանտային աստիճանաւորներ Ստավրակի և Գրիգորենկոյին կեղծումների համար, իսկ Սախար և Վարշավսկի հրէաներին, կաշառքներով նրանց դրդելու համար կեղծումն գործելու, զրկել առաջին երեքին իրաւունքներից և աքսորել Սիբիր, իսկ Վարշավսկուն բանտարկել կալանաւորվածների բօտայի մէջ $1^1/_2$ տարով։ Գանձարանի 125000 ր. փնտրը վերցնել բոլորից։

Կ. ՊՕԼԻՍ, 14 Նոյեմբերի։ Պետական դատաստանութեան մէջ մեղադրված լինելով, Դերվիշ-փաշա կալանաւորված է։

ԼՕՆԴՕՆ, 14 Նոյեմբերի։ Էդինբուրգի դուքսը լաւանում է։

ԲԵՐԼԻՆ, 14 Նոյեմբերի։ Եկող շաբաթ կը հասնի այստեղ իշխան Բիսմարկ։ Պրուսական ժողովը որոշեց բարձրացնել Գերմանիա բերվող փայտի մաքսահարկը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 Նոյեմբերի։ Այսօր կայսրուհու ծննդեան օրին քաղաքը զարդարվեցաւ գոյնզգոյն դրօշակներով։ Եղանակը տաք է, սահնակի ճանապարհը փչանում է։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ Պաժսկի ուսումնարանի մէջ ուսանող Բուխարացի էմիրի որդին բերեց թագաւոր կայսրին նոր հիմնված բուխարական շքանշանը „ծագող աստղի“ և զանազան ընծաներ թագաւորի, թագուհու և թագաժառանգի համար։ Ոչնչացնվում է զինուորների շղթայակապ անելը նրանց զինուորական բանտերը ուղարկելու ժամանակ։ Միայն ճանապարհին անկարգութիւններ անողները պատժվում են ձեռքի շղթայ կրելով։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ ռուսաց նաւագնացութեանը նպաստող ընկերութեան վարչութիւնը միաձայն կարծիք յայտնեց Կովկասեան տրանզիտը ոչնչացնելու համար։ Ենթադրված է գիւղական կալուածական բանկերի մէջ գիւղական հասարակութենից 2-ական պատգամաւորներ նշանակել։ Ս. Պետերբուրգի դուման մտադիր է ծանել քաղաքային կանոնագրութեան տասնամեակը շնորհակալութեան ուղերձ ներկայացնելով Կայսրին, Հանգուցեալ կայսրի հոգեհանգիստը կատարելով, ուսումնարաններ հիմնելով և ստիպենդիաներ նշանակելով ուսումնարանների մէջ։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ գիւղական հասարակութիւններին վաշխառուներից ազատելու և նրանց ստեսութիւնը բարձրելու նպատակով ֆինանսների մինիստրութիւնը մտադիր է օգնել գիւղական բանկերին, որոնցից պարտքեր պէտք է տրվեն գիւղերի և վոլոստների ժողովների որոշմամբ։ Կասսաների վերահսկողները ընտրվում են տուն ունեցող գիւղացիներ, որոնք գիւղի կամ վոլոստի վարչութեան չեն մասնակցում։

ՓԱՐԻԶ, 14 Նոյեմբերի։ Երէկ պատգամաւորների ժողովը սկսեց քննել պատերազմական մինիստրութեան բիւդժէտը։ Կառավարութիւնը 590 միլիոն ֆրանկ է պահանջում, բացի այն ծախսերից, որոնք հարկաւոր են Տունիսի գրաւման համար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ,

Հինգշաբթի, Նոյեմբերի 18-ին, Հայերէն ներկայացումն

ՅՕԳՈՒՏ Պ. ԱԻԱԼԵԱՆԻ

Առաջին անգամ

ՊԱՏԻՒ ԵՒ ՓՈՂ

Կամ 5 արար. թարգ. Պ. ՉՄՇԿԵԱՆԻ

Դերասանական խումբը պատրաստում է

ՍԻՐՈՅ ՓՈԽԱՐԷՆ ՍԷՐ

Հեղ. Ֆր. ՇՊԻԼՀԱԳԵՆԻ

1—3

ԴԱՇՆԱՄՈՒՐ *վարձով է տրվում կամ ծախվում է։ Դավիդովսկայա փողոց, տուն Քանանովի, բնակարան Քանանովի։*

1—3

Վարձով են տրվում ԵՐԵՔ ԽԱՆՈՒԹՆԵՐ *մառաններով և առանձին* ԳԻՆՈՒ ՄԱՌԱՆ *Միխայլովսկայա փողոցի վրա, տուն № 11։ Գնի մասին տեղեկանալ նոյն տեղը դռնապան Ուշերից։*

1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ *յայտնում է, որ ներկայ Նոյեմբերի 20-ին նշանակված է երկրորդ անգամ աճուրդ Հոկտեմբերի 28-ին չը կայացածի տեղ, կապալով տալու համար տուրքերը քաղաքային սպանդանոցի մէջ անասուններ մորթելու համար։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան գրասենեակի մէջ առաւօտեան 9 մինչև 2 ժամը։*

1—3

КЕЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

18—50

ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵՆՑԻ

ՕՐԱՑՈՅՑ

Գինն է 10 կ. գումարով գնողներին 15% զիջումն

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ·

Նոյն տեղը

Պ. Միանսարեանցի „ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆԻ“ Ճնացած օրինակները՝ անկազմ 2 ր., կազմած 2 ր. 50 կ.։

Տասից աւելի գնողներին 20% զիջումն։

(չ. և շ.) 3—6

Վերջնական ՎԱՃԱՌՈՒՄՆ *չափազանց էժանացրած գներով անգլիական սեղանի* ԱՄԱՆՆԵՐԻ *և* ՍԻԳԱՐՆԵՐԻ։ ՄԵԼՄԱՆԻ *խանութի մէջ Թիֆլիսում Երևանեան հրապարակի վրա № 13, տուն Իզմիրովի։*

2—3

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի Վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տակից լոյս տեսաւ նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ)։

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%։ Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում։

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Տրվում է ՎԱՐՁՈՎ *մի լոյս* ՍԵՆԵԱԿ *մեբելով, վառելափայտով, սամովարով և ծառայով, ամսական 12 ռուբլով։ Կուկիայում, Իսարլովսկայա փողոց, տուն № 9, ներքին յարկում։*

ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМНАТА съ мебелью, отопленіемъ, самоваромъ и прислугою за 12 р. въ мѣсяцъ. Куки, Исарловская улица, домъ № 9, нижній этажъ.

3—10

ՐԱՖՖԻ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Եւ վաճառվում է Թիֆլիսում կենտրոնական Գրավաճառանոցում և Հրատարակչի մօտ.

Գինն է ԳԵՂԵՑԻԿ ԿԱԶՄԱԾ *1 ր. 35 կ. անկազմ 1 ր.։ —*

Հրատարակչի հասցէն՝

Тифлисъ. Оаннесъ С. Степанянцъ на фабрикѣ Сали-оглы.

4—5

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ

Դասագիրքը

„Կովկասեան գրախանութի“ հրատարակութեամբ և ծախվում է նոյն գրախանութում։

Գինը 25 կոպէկ է։

Գումարով առնող և ԿԱՆԽԻԿ *վճարողին 20% զիջումն կը լինի։*

Կարելի է դիմել.

ТИФЛИСЪ. Кавказская книжная торговля—З. П. Грикурову.

կամ

ТИФЛИСЪ. на Авлабарѣ. Ованесу Назарянцъ.

Ց. Նազարեանց.

Սորվեցնում եմ ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ *և* ՌՈՒՍԱՑ *լեզուներով. պայմանների մասին կարող են դիմել ինձ մօտ* ԶՈՒԲԱԼՕՎԻ *քարվանսարայ, Գասպարեանցի մագազինում ամեն ժամանակ։*

ՍՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐԵԱՆՑ

ԹԷՅ *առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ։ Այդ թէյից* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ։ Օրինակ. Լաւ* ԿՕՆԳՕ *թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական* ՍԱՆՖԱ *թէյ 1 ր. 40 կ., հիանալի* ՄՕՆԻԿ *թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ* ԿԱՑՍԱՈՒ *թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ* ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ *6 ր.—60 ր., երկաթէ* ԳՐԻՉՆԵՐ *ամբողջ Անդրկովկասի համար, շոկոլադ ֆրայ, Շեվիլդի* ԴԱՆԱԿՆԵՐ, *վերականգնող* ՄԱԿՄԱՍՏԵՐ *մազերի համար, հրացաններ* ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ *վերլի,* ԹԱՄԲԵՐ *բարնեբիի, կոլմանի նշշեշայ,* ԱԼԲՕՄՆԵՐ *Շվարցի կէս գնով։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 *և* 100։

78—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԻՖԻՍԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 *և* 160.

Համեմատեցէք թէյ

1 ր.	10 կ.	*թէյի հետ ամեն տեղ* 1 ր.	30 կ.
1 „	20 „	. . . . . 1 „	60 „
1 „	40 „	. . . . . 1 „	90 „
1 „	60 „	. . . . . 2 „	20 „
1 „	80 „	. . . . . 2 „	50 „
ամենալաւը 2 ր.		. . . . . 3 „	——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շոկոլադի և կակաո-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բազրի կոնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրնեբի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի ըէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, կոլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբոմներ և այլն և այլն։

28—100

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ *ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ* ԿՐԱՎԱԹՆԵՐ *8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ* (погребцы) *6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտ., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամորնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ.* (գուլաններ) *ըէվոլվերի, սիգար Ռենդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000* ՖՈՒՆՏ ԹԷՅ (*չայ*) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, *բիսկվիտ.* (*սուխար չայու և կաֆէի*) *Էլինէմի. կոֆէ Էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. Հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի* (для зельтерскихъ водъ и пива) *ղուլթուկ* (пухъ), *պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիրի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. մխս կարելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Ջուր մաքրելու, կրախմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, Թուղթ փոշի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեռախտակ, Թանաք, Թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուլիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու,* ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, *ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուսաիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոգի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ* (бумага) *մատոկի կօճի և շալէ* (гарусъ) *ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ* ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. *և այլն և այլն։*

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտակս գտնվում են ՄԻՒՌԱՑԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ *պահեստում։* (въ складѣ) *միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.*

Թարաքաղաքացիք կարող են դիմել հեռևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

173—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը։

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հեռևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Ноября 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор-Меликъ ул. каз. д.